ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար տաբատների
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/20» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» հունիսի 2023թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Սուքիաս Գրիգորյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության արագ արձագանքման և վերլուծական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման), ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հայտի ապահովման բնօրինակի ներկայացման մասին.

1.1. Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում նշված է, որ Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ

հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը:

1.2. Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի հայտում առկա է բանկային երաշխիքի բնօրինակից արտատված (սկանավորված) տարբերակը: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել բանկային երաշխիքի բնօրինակը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/20» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը:

2.2. Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.3. Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հունիսի 19-ին, ժամը 10:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել

հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 16-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Սուքիաս Գրիգորյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան